

ՄԱՏԵՆԻՇԱՐ «ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՈՒՆԻ ԳԵՂԵՍԻ»-Ի ԲՈՒՑ

ՆՈՐ-ՁՈՒՂԱՅԻ ԺԷՒ ԴԱՐՈՒ
ՈՐՄԱՆԿԱՐԶԱԿԱՆ
ՅՈՒՇԱՐԶԱՆԸ



Հեղինակ
ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ԵՐԻ ՆՈՐԳ

1942

726 (47.825)

6
Ym.

206

750.52 Անդին ժայռի՛կ,
755 Դու էիր, որ իմ հոգում վտակներ ուսման սկիզբը եւ սովորեցրիր ինձ
բարին սիրել ու լուին ձգտել: Դու էիր, որ զարթեցրիր իմ սրտում գե-
ղեցիկ հաշտիկը եւ քո անուշ լեզուով ներշնչեցիր ինձ բարձր ու վեհ գաղա-
փարներ:

Նայեցէ՛ք դու էիր, որ արցունքոտ աչքերով ճանապարհ դրիր ինձ դէ-
պի օտարութիւն:



ՄԱՐԲՈՒՀԻ ԵՐԵՄԵԱՆ

Երկար տարիներ վառ ձգտումներով աղբյուր օտար հորիզոնների
տակ, աղբյուրի անուշ ախտիկ ու քաղցր մաշիկ կարտար սրտին:

Ու մի օր էլ, հէ՛յ վա՛խ, սեւ խարտը տալ: Այդ օրից սրտումս արեւ էլ
չի ծագելուս...

Պիտի կարողանա՞մ, արդե՛ք, մի օր զերեկմանդ համբուրել եւ հողա-
կոյաղ վարդերով ծածկել...

Մինչ այդ, ազիդ մայրի՛կ, թող, որ այս գրքո՛վը սրտիսկան եւ երախ-
տադիտական քնիմ զգացումներով, սրտէս յաւշարման, կանգնեցնեմ ան-
շուք շիրժիկ զրոն:

Վշտանաբ եւ կարտասկէզ սրտիդ՝
ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ



5927

A 1399

ՆԱԽԱԲԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹԵԱՆ

«Հայաստանեայց Եկեղեցիք»-ի մասեմա-
շարի երրորդ պարհն է, որ հրատարակու-
մ ենք: Այս պարհը արժանի է յատուկ ուշա-
դրութեան հայ արուեստի պատմութեան հա-
մար իւր բերած նորութիւններով: ԺԷ. դարը
լինկիւմուրի եւ յաջորդների հարուստներից
եւ ԺԸ.—ԺԶ դարերի նպետը թմբութիւնից
յետոյ, մասաւոր եւ զաղարտեան շարժումնե-
րի նոր հոգի եւ բերում: Էջմիածնի կաթու-
ղիկոսները Մովսէսից սկսած առաւել կամ
նուազ չափով կապ ունին այս շարժման հետ,
որ սկսում է դուռ կրճատման հոգի վերայ,
միանական կեանքի կարգաւարութեան կար-
գախօսի տակ, բայց անցնելով հեազհեազ շի-
նարարական, զեղարուեստական եւ ապա ըս-
տազական ձգտումներին: Այդ շարժման մի
զինն է եւրոպական ազդեցութիւնը հայ ար-
ուեստի վերայ:

Երեսոյթի հաւանաբար համար հետեւե-
աւ ազդանքներն ի նկատի պիտի ունենալ:
Նախ միանականական յարաբերութիւնները
հին եւ նոր Հայաստանի կողմից արեւմտաւոր
հետ: Ապա Նախքաղաքական արժուի կապերը
արեւմտաւոր, յասկապէս Լեւոնայոց հետ,
նաեւ նուիրակների երթեւեկութեամբ: Եր-
րորդ, կաթուղի միախմտումների ներկայու-
թիւնը Սպանումում, ինչպէս եւ Եւրոպայի-
նների եւ Պարսից միանականական յարաբե-
րութիւնները, որ իրենց հետքն են թողել
նոյն իսկ պարսկական արուեստի մէջ:

Այդ ազդեցութիւնը Հայոց վերայ նկա-
տելի է նախ Առաւմտաւորների նկարա-
դարձման մէջ, որ հետեւողութիւն էր Եւրո-
պայում արդէն ծաղկած եւ աղագրութեամբ
տարածուած առաւմտաւորական պատկերա-
գրութեան: Ձեռնարկեան հնագոյն երեսոյթը
մեր մէջ էջմ.—ի No. 351, Ղազար Բարեբրա-
ցու օրինակն է 1619 թուից, դրւում եւ նկա-
րադարձութեամբ Լեւոնայոց կամ Լեւոնայ-
ոցու ընդօրինակութիւնները երեւում են
Սպանումում կամ Շուշում արդէն 1642, 1649
թուերին: Հայապետ ըստմիտաւ նկարը
ձեռքով, որ ինչպէս որ «Կետարցու» ժամա-
նակի լուստուր մարդկանցից մէկի՝ աշակեր-
արն էր: Նոյն Հայապետի գործն է եւ էջմ.—ի

No. 189 Առաւմտաւորները 1649 թուին, Գոս-
պար երէցի գրչութեամբ:

Բայց եւ տարբեր նկարչական մեակեր-
պութեամբ, սակայն միշտ եւրոպական աղ-
ղեցութեան տնայայտի նշաններով, Առ-
աւմտաւորների ունինք Ամբղում Բարեկ
Ամբղու առաջամբ, Տէր Միշտիլ զանա-
նայի եւ Միմա զաղարտեան նկարադարձու-
թեամբ, 1622—1632 թ.թ.: Գ. Պարտմ 1643
թուին նկարադարձութեամբ է մի առաւմա-
ւորն ձեռնարկ Աննից Եսկար զպրիւ, ** մի
երկրորդը Մարտիկ Ղազարի 1649 թուին, Գ
մի երրորդը Մարտիկ նկարչի 1654—1661 թ.՝
Նահապետ Կաթուղիկով Առաւմտաւորները
Մաղաքիայի, Երեմիա Չէլիկովի արդւո՝ ձեռ-
քով 1686 թուին: Դ՛ Կան եւ ուրիշները մեզ
ժամեմ: Այս շարժման մէջ որով զեր եւ կա-
տարել նաեւ Ոսկանի 1696 թուին ապագրած
Առաւմտաւորները: Մենք տեղիք պիտի ունե-
նանք պարզեան այս խնդրը իւր ծագման եւ
զարգացման փաւրով, որ հայ արուեստի
պատմութեան կարեւոր գլուխներից մէկն է
ԺԷ. դարում:

Եւրոպայից եկած այս հոսանքի մի երկ-
րորդ երեսոյթը՝ արժանկարչութիւնն է, նոր
Հայաստանի Բեղզեւն եւ Փրիլէ եկեղեցիների,
զույց, եւ Ապուլիայի Թովմա առաքելի միա-
նի: Այդ ազդեցութիւնը շարունակում է
եւ ԺԸ. դարում յաճմին Տիրացու Յովհաննէ-
սի, Եւրոպայում պատմած ուղտական
անձաւ պատկերներով: Դ՛ իսկ էջմիածնում
Առաւմտաւոր կաթուղիկովի ժամանակի
արժանկարչութեան միազգայնութիւն, մինչեւ
Նազաւ Յովնաթանի մեծ գործը Ղուկասի օ-
րով: Այստեղ խոսքը միայն պատկերադրու-

* Երուս. No. 2559:

** Զոհրաբի յառաջաբանը իւր ապագրած
Առաւմտաւորի մէջ:

Գ Երուս. No. 1927:

Յ Երուս. No. 2561: Օրագրութիւն Երե-
միա Չէլիկի Գեովորդեանի՝ Միւսրպ Արեւ-
պիսկապոս Նշանեանի երաւարակութեամբ
1939. եր. 138, 154, 159:

Դ Ելեւ. No. 349:

Դ՛ Հայաստանի ԵՊ Գ. Լեւոնեանի գլե-
ղարուեստի մէջ:

թեան ժամին է եւ ոչ զարգացրութեան, որ պարսկահամարեւելեան է ծնացած, էլէ՛ր համա՞նում եւս ժէ. զարք տաւինն շատորդին Աստուածատուր Կաթողիկոսի չինած եւ զարգացրել տուած վնճարանի ծաղկեայ զանինքն նկարեալսն է արեւելեան սնով, ինչպէս եւ իման տեղի եւ առաջ րեմի զարգացրութիւնը: Բայց ոչ միայն եւս կեդեցական կերպարուեստը որով չափով ենթարկուած է եւրոպական աղեկցութեան, այլ եւ աշխարհիկ որմնկաւորութիւնը Նոր Զուգայի նոյն ժեմատուններէ ազարաններէ մէջ, Նկարիչ Մարգի Խաչատրեանի վերաբաղութիւններէ մի կարեւոր ժաւոր եւրոպական աղեկցութեան կառարեայ ապացոյցներն ունի, տարազի, զարգ ու զարգարանքի եւ ընդհանուր սնի տեսակէտներով: Իսկ այդ վերաբաղութիւններն առնուած են Խոնայ Պարոտի եւ Խոնայ Աւետիքի աղաբանքներէ, որոնք մի եւ նոյն ժամանակ Փրկիչ եւ Բեզգեհնէ՛ն եկեղեցիներէ որմանդկարչութեան մեկեղաններն են:

Այս տեսարանը րեւում է եւ սրիչ Նորութիւն, որ ապիկուած եւ նկարադարձ ապիւսներէ զործածութիւնն է եկեղեցւոյ պատերի երեսին նազցած: Այս արուեստը յատուկ է սոնատարակ մասնեղական երկրներին, բայց Հայերին էլ րաւորովն անձամբ չէ եղել: Անի պարսկայնէրէ վերայ աչգդոսի նաշքը կան մնացած. իսկ պեղումներէջ նմուտս խեցեղէններէ աճալին Հարրատութիւն թանգարանում: Եղուարդի ԺԳ. զարքի սկզբին շինուած Ս. Յակոբի գմբէթի վերայ մի ժապաւն շուրջմակի ծածկուած է զոսնադարձ աղբաններով, որ պարսկական նման արուեստն են յիշեցնում, Նոր Զուգանում այս արուեստը երեսիթը նուաճող չէր, այլ աչգ կապ ունէր Պարսկաստանում՝ շինական զարդաների աղեկցութեամբ յատուկ եղած նման աշխատանքներէ նա ժՁ. ե ժէ. զարեւում, որոնք նաեւն էն եւ Հայերը Յամկայի էր աւելի շատ յուսմանքներն ունենայ,

զուցէ եւ նոյն արժանապարտութիւններով, որոնք աւելի էր զիւրացնեն ուսումնասիրութեան զործը: Այս արուեստն ապա անցել է Փոքր Ախաշի նաշարանի Կուսիմա կամ Քեթիմանի շուրջը եւ զարձել տեղական նաշարեան մասնադպրութիւն: Երուսաղէմի Հայոց Ս. Յակոբի տաճարին կից՝ էլէ՛ր համինն անունով մասունդի պատերի մի մասը զարգարուած է աչգդոսի յախճապակեայ, պատկերաւոր աղբաններով, բայց ոչ աւելի չին զան 1719 թուականը: Կան սկուտներ եւ ջրամաններ 1717 թուականից: Մարգկային զէմքերից ոճանք շինակունի նմանութիւն են րեւում, որ նրանք ծաղումն է մասնանշում, աշինքն Սպանիի շինանք վարդանները: Կուսիմայի յախճապակեայ մի ժեմ կոտը ունի յայտնի զեղարուեստաւոր եւ նախառաջ Եարութիւն Հաղարեան 1737 թուականով: Երուսաղէմի յախճապակեայ այս աղբաններ ենթարկուած են տարազի մի զիմանական տաւածապարտութեան:⁹

Ողջունելի է, որ Երամանից զատ Նոր Զուգայի վանքերի որմնկաւորութեամբ զարդաւել են նաեւ ե. Հայրապետեան¹⁰ եւ Եարութիւն Քիւրեանի՝ վերջինը առաքելութիւններով Երամանի նախազարդութեան զնախառութեան զէմ, որ տիկթ է ստեղծում արժանապարտութիւններէ եւ պատկերադրութեան յատուկ տաւարութեան եւ զմտութեան:

ԳԱՐԵԳՈՆ ԱՐԲԵՂՍԻԿՈՐՈՍ

Նոյններ, 1942
Նիս, Եոթի

⁹A. Nomikan Ta Kristianika Xeramoughmata ton Armeniakon Patriarcheon ton Jerosolymon. Alexandrela, 1422.

¹⁰Հայրեմիթ ամապիր, Բաւառ. Յուլիս. 1936:

†Հայրեմիթ, Գեկա. 149, 1939 p., Յուլիսար 126, Մարտ 118, 1940 p.:

ՅԱՌԱԶԱԲԱՆ ՆԵՂԻՆԱԿԻ

Աղաւանի Նոր-Ձուգա արւարձանի ըս-
քանչեւի որմանկարները, որոնք մեծ մա-
սամբ վրձնուել են 17-րդ դարում, մինչեւ որս
էլ աւանձին եւ քաղժակողմանի ուսումնասի-
րութեան առարկայ չեն դառնել: Դեռ Հանդէս
չի եկել ո՛չ մի բանասէր-պատմաբան, որ
հայ մամուլում մանրամասն վերլուծելով
նկարչական այդ զեղեցիկ յուշարձանների
զեղարւեստական արժէքը, փրկէր նրանց
մոռացութեան փոշիներէց: Յերեւա այդ երե-
ւոյթով էլ պիտի բացատրել, որ արեւստի
այդ կոթողները մնացել են անյայտութեան
խաւարի մէջ:

Այսօր զոնէ մամանակն է, որ կապւենք
անցեալին եւ առանձին սիրով ու դուրգու-
բանքով արեւստի պատմութեանը յանձնենք
նկարչական այն բոլոր սեփարժէք ստեղծա-
գործութիւնները, որոնց մեր նախնիքներն
աւանդ են թողել նոր սերնդին: Փամանակն
է, որ Հրապարակ թերեւք համբ պատերի
վրայից հնադրյն նկարիչների արտադրու-
թիւնները, ծանթթայններ այդ զաններն եւ-
րոպային եւ ցոյց տանք, որ հայ ժողովուրդը

կերտել է այնպիսի գործեր, որոնք զեղար-
ւեստական խաւոր արժէք ունեն:

Զպէտք է մոռանալ, որ պատմական ար-
ւեստի այդ թանկագին մնացորդները ո՛չ
միայն հայ ժողովուրդի մշակոյթային յատա-
նագիծութեան եւ զեղազրտական հաշակի
զարգացման ամենացայտուն ու պերճախոս
ապացոյցներ են, այլ եւ ապագայ ստեղծա-
գործ աշխատանքների համար արժէքաւոր
աղբիւրներ:

Ահա այդ զրտակցութեամբ՝ այսօր ար-
ւեստի պատմութեան յանձնում եմ Նոր-Ձու-
գայի որմանկարչական ամենազեղեցիկ յու-
շարձաններից մէկը: Դա Բեթղէնէմ եկեղե-
ցին է, որի պատերի վրայ ցուանում են 17-րդ
դարու նկարիչների արտադրութիւնները,
արտիստներ, որոնցից ամեն մէկն, իր ստ-
ղանդի սահմանում, աշխատել է իր մտքի
ու հոգու ստեղծագործական կրակը նւիրել
զեղարւեստի զարգացմանը եւ վրա պահել
հայ նկարչութեան մշտադաւն ջրունը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Նոր-Ձուգա
8 Յունւար 1940

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԺԷՐԴ ԴԱՐՈՒ

ՈՐԽԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՅՈՒՇԱՐԶԱՆԸ

ՆԵՐԱՏՈՒԹԻՒՆ

Նոր-Ջուզա: Դա Սպառնան հայաբնակ արւարձանն է, որ հարուստ է ո՛չ միայն 17-րդ դարի մշակութային կենդրով, այլ և որմանկարչական արեստի կանգնող մշակութային, որոնք այսօր էլ ինչպէս ևս պատմական եկեղեցիներում և խաչայական հին ապարանքներում: Այդ նկարներէն շատերը դրսուում են իւրաքանչիւր զեղարեստանէրի ուշադրութիւնը ո՛չ միայն իրենց ինքնուրույն, հարապատ ոնով, իրենց նրբութեամբ ու խորութեամբ, այլ և թաղման հմայիչ գոյներին սքանչելի ներդաշնակութեամբ, եւրանդներ, որոնք խոսում են ամեն մի տարբարի ստի, հոգու, զգացումների հետ և միաժամանակ պատմում հնադրին նկարիչների առեղծայնութեան խորը իրքի մասին:

Նկարչական այդ յիշատակարաններէն առանձին ուսումնասիրութեան արժանի է Նոր-Ջուզայի Մէլքոն Քաղում կանգնած քարձրակառոյց եկեղեցին, որ իր նարտարապետական պարզութեամբ ու անպտեհ զեւայութեամբ, իր բարձրակն ու հայկապ դժբէթով մի մանուկային սքանկանքով զեղարեստական մեծ հնաազգրութիւն է ներկայացնում և առանձնաշատուի տեղ դրուում արւարձանի տաճարիկու կանգուն նկարազարդ եկեղեցիների մէջ: Դա Բեթլեհէմ եկեղեցին է, որը հիմնուել է 17-րդ դարում, Շահ-Աբրահա Բ. ի պատմաւրջանում: Դժուար է առանց յուզմունքի նայել այդ հին, պատկառելի կոթողին, որ լայն կուրծքը խիւղաբանի թոյլ է արել ժամանակի առաջ և գլխաւոր հակառի պէս զուգոր բարձր պահանջ՝ խորատուրել է խոր մտքերի մէջ:

Նկարչական այդ յուշարձանի կառուցումը կապուած է Յօջա Գետուս Վելիշտեանի անուն հետ:

ԽՅՁԱ ՊԵՏՐՈՍ ՎԵԼԻՋԱՆԵԱՆ

Յիշար, նախաձեռնող, ուսեղ կամքի աչք և դժուարութիւնները յաղթահարող Նոր-Ջուզայիցի այս խաչային մասին կենսազարկան շատ քիչ տեղանք կան: Պատմական մեծազգի բնատաղարանները նրան ոչ մի տող չեն ուիրել և նա համարեա ամենքին անյայտ է մնացել: Նրա մասին արտայայ-

տւել է Նոր-Ջուզայի պատմադէր՝ Գարու-Քիւն Տէր-Յովհաննէսը, որի Պատմութիւն Նոր-Ջուզայու գրքում (Ա. հատոր, 1880 թ., Նոր-Ջուզա, էջ 128) արձանագրւում են հետեւեւ ճակիքն սուրբը:

«Վէլիշան զարքեայ ի Հայաստանայ Եա-հապետ եղիւ իօյայ Պօղոսանցի ազգառան-մին: Եմա ի մնանէ իօյայ Պետրոս, որ յէ-րատ մեծութեան ընչից եւ յէ-րատ եղալոյն զնրմոտանդութեան յառաջագիւմ եանկիսաց-եայ իւրով արդեամբ կառոյց զեկեղեցիս եկեղեցին Բեթլեհէմի՝ հասարակօրէն Մէյ-դանի մաս կոչեցեալս:»

Բայց Յօջա Գետուս յառադրն կենսա-զիրը, որ ա՛նքան ցայտուն և արժանաւոր կերպով է ներկայացնում նրան, իր թողած արեստի մեծ կրթողն է, որի պատերի վրայ սպիկները տառերով քանդակւած են նրա և հարապատների անունները:

Սակայն, Յօջան հասարակական ի՛նչ ապարկուած է փայլում:

Նրա պատկերը տեսնում էք 17-րդ դարի տառիկն լրջանում: Իր ժամանակի մեծա-շուք, անուան և ամենահարուստ գիւմերից մէկը, (1) որի մեծնեղցութեան, խիղախութեան և վնասկանութեան մասին ցայտուն զազաւոր է տալիս պատմաւրջանի միջադ-գային վաճառանոցներում ցոյց տաւած զոր-ծուկութիւնը: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Նոր-Ջուզայիցի մեռն, խիղաք հայ վաճառականներն արձամարհեղով այլաբա-

(1) Thomas Herbert, որ 17-րդ դարում Անգլիայի Զարդ Ս. Իսապետի կառավարութեան կողմէն Իրանի Ծախ-Աբրահա արեստին ուղարկւած դեսպանութեան մէջ էր գտնուելում, գրել է իր նամակագրութեան պատմութիւնները, որ պատմական անց-եալի մասին կան քանակազին էշեր: Իր ուղե-գրութեան մէջ նա Նոր-Ջուզայի խօջանքի իւրաքանչիւր բան և նրանց փարբանութեան պատկերը գծում է այսպէս:

«Յօջա Նապար հայ իշխանն իմ Զուլայի տան մէջ իւրաքանչիւր դեսպանին... ըստ տան ամաններն ու քանակներն ամբողջ նկի էին: Խոտաւու օշարակի օրակներն եւ Շիրա-զի գիմով լի քանակներ պարբարում էին մեր գրասանքի մասնակէս:»

Հայտնական ահադին տարածութիւններն ու գծաւորութիւնները, Նոր-Ջուղայից դնում էին Հնդկաստան, ապա այնտեղից անցնում Իտալիա, Ալբանիա, Ֆրանսիստան, Հոլանդիա, Հնդկաստան, Նոյնիսի Փաթիւզաւ, Դանիաբաթ, Մազովի և այլ երկիրներ, անում էին ու վաճառում հոթիզին, ջաթան, տաւա, ապրիլում, խրիզ, բուրդ, թամբակ, մանած, դիտոր, մէրլան, քարերբար, թերեւս, մեղրամոմ, քնար շաքար և այլ ապրանքներ (*) ու ահադին Հարստութիւն դիզելով, վերադառնում էին Նոր-Ջուղա:

Յօշա Պետրոսը եւս իր առեւտրական մեծ կարգաւանդների հետ Նոր-Ջուղայից ճանապարհւում է Հնդկաստան, ապա նաւ նստելով մեկնում Եւրոպա, գլխաւորապէս Իտալիա և Ամստերդամ: Այդ վաճառաւաշ քաղաքներում խաշան վաճառում է Երանից իր հետ բերած թաւաղանքի ալմաստներն ու ակնոցիկները, ապա անում է հոթիզին, խրիզ, ապրիլում կարմիր, լեզակ, քարերբար, ոսկիթիլ և այլ ապրանքներ և ուղեւորւում է նորից Նոր-Ջուղա: Սոկլան, աղջկան անհուն արարածութիւններ կարող ու հակադրական նարստութիւն զննող, միամամանկ իր շրջապատում հեղինակութիւն և զիրք վաշելով Նոր-Ջուղայից իսկ վաճառականը չէ առհամարակալում միայն իր անխոնջ առեւտրական գործունեութեամբ, այլ ևս ընդգրկում է իւր աւելի բարձր նպատակ — ներքին ժողովրդին, ծառայել զեղտրեւտին: Վերաւելելով կեանքի հոթիւնը, նա դանում է, որ էս անցաւոր աշխարհում երջանիկ է միայն նա, ո՞վ մի վեհ ինչեւայ ունի և ծառայում է մի վեհ գաղափարի: Եւրոպայէս դիտակցում է, որ կեանքի վեհութիւնը բարձր, ապին, մալուր գործերի մէջ է, որ խրադանչիւր անհուն ո՞րքան էլ Հարստութիւն ինչի ևս դանձր ժողով է, իր Համար աշխարհում ուրիշ յիշատակ, ուրիշ արժան չի մնում, եթէ ո՛չ միայն իր բարի գործը, իր հոգւո մեծութիւնը: Ընթանում է, որ մալուր գործին է միջա անմահ: Այդ խոր հոմազունով ու դիտակցութեամբ էլ նա, Հատարարձ մալուր իր մամանկի ժողովրդի բարոյական աշխարհաւանդողութեանը, Նոր-Ջուղայում կառուցել է տալիս Բեթղեհէմ քաղաքիւն եկեղեցին և յաջորդ սերունդին թողնում է մի զեղեցիկ յուշարձան: Մօտ երեւ ևս քառորդ դարուց ի վեր կանգուն է այդ

կոթողը, որի ներքի պատերը, ներքեւից միջին զմբէթի ծալը, դարձանկարների, ծաղկեկերտների, բլիթի քանդակների, բրդեական նկարների և մէկը միայն Հմայիլ գործերի մի Հարստան ու ներդաշնակ աշխարհ է, որ իր վեհութեամբ խոսում է ամեն մի պատանի զեղարեստաւորի Հոգւո և զգացումների հետ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆԱՆԻՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Բեթղեհէմ եկեղեցւո շինութեան և Եօշա Պետրոսի վաճաղանութեան ու Հայկական անկումն կամքի մասին Նոր-Ջուղայի Հայ ժողովուրդը հիսուի է մեկերկու առաւելութիւններ, որոնք մինչեւ օրս էլ չըթնւ են նրա շրթերի վրայ: Այդ առաւելութիւններից մէկը պատմում է, թէ Եօշան Աստղ Եւրոպի երկրում է Մէլզոն թաղի Աստուածային եկեղեցին, որի հիմնադիր Յօշա Աւետիսը իր ծառային նախադէպ պատկերում է՝ Եօշա Պետրոսին յիշելով եկեղեցին: Այդ Հանդաւանքն ա՛յնքան ծանր է աղուում Եօշայի հոգեկան աշխարհի վրայ, որ նա հիշա Աստուածային եկեղեցւո գիմացը կառուցել է առախ մի նոր եկեղեցի: Առաւելութեան մի տարրեր վարձանոն էլ աւելացնում է, թէ Աստղ Եւրոպի օրն Աստուածային եկեղեցւում ա՛յնքան Հոմ թաղութիւն է լինում, որ Եօշա Պետրոսը չի կարողանում ներս մանել: Այդ զեւպն էլ, իբր թէ, առիթ է դառնում, որ նա Աստուածային եկեղեցւո գէմ ու գէմ հիմնել տայ մի նոր և էլ աւելի շքեղ ու հոյակապ եկեղեցի, (*) որի զմբէթի բարձրութիւնն այնպիսի շափեր է Համանում, որ Հաջամունքի զաղամունք է զարթեցնում գիտողի մէջ, շնորհա եկեղեցւո երկարութիւնն է 80, իսկ լայնութիւնը՝ 43 անասալի:

ԱՐՇԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անճար է կոմը շտանկ Բեթղեհէմ եկեղեցւո Հասա ու ամաւր պատերի տաւը, որոնք իրենց լուսութեամբ խոսում են ու պատմում անցալից: Եւ Հմարիւն, նկարապաշտ պոլ պատերը Համր չեն: Երանջ վրայ տեղաւեղ երեւում են ասկեղի կամ սեպագի յիշատակագրեր, որոնք արժանապարհ են, թէ եկեղեցին երեւ Հարիւր տասն երկու տարուց անցեալ ունի: Ընդգծում են պատմական նշանաւոր զէմբերի մասին, միամամանակ նը-

(*) Առանգութեան մասին նշան է նաեւ «Գաւառութիւն Նոր-Ջուղայու» գրքում:

լում Հիմնադրի ու նրա Հարազատների, զբոսաբարդի Խոջա Պետրոսի, ծնողների, եղբայրների, հորեղբայրների, հնոջ, զաւակների, հարսների, եղբորդիների, նոյնիսկ թոռների անունները: Այդ թանկագին արձանագրութիւնները պարզում են նաեւ, որ Եկեղեցւոյ շինութիւնն աւարտել է Հոյսոյ 1077 (առաւել 551 Հաւատար է 1628) թիւն, Շահ-Աբրահա Բ-ի թագաւորութեան ժամանակաշրջանում: Մասնաւորում են, որ նոյն թեականի էջիթոմանի կաթողիկոսն էր զգալ չուտար Տէր-Մովսէսը, իսկ Նոր-Ջուղայում առաջնորդական պատասխանատու պաշտօն վարում էր Տէր Խաչատուր Կեաւաբցին, իր ժամանակի մասուր վերանմուծեան ամենախալլան, ամենապարտաւստ, զործունեաց եւ դիւանն Հոգեւորականներից մէկը, որի կեանքի տառալին շրջանի պատմութիւնը, ստորագրողները, մինչեւ որս էլ զիւս չի լուստարանում: Նա ծանօթ է իր ծննդավայրի՝ Ենաթրոյի անունով, ուր ծնւել է 1590 թեականին: Ենթադրւում է, որ Հոգեւոր կոչում է ստանում Կիրոսն Կղզիի Ս. Մակար վանքում, ապա անցնում է Կ. Պոլիս, ուր աշակերտում է Դաւանապցի (Քեամախեցի) Գրիգոր Կարգապետին:

Պատմագիր Առաքել Վարդ. Դարբինցու վկայութեամբ՝ նա շնչել էր, Հանդարտ, զայցրտորոյ, խմաստան եւ քանիտուն, իսկ նրա պատմութեան 371-372 էջերում կարդում ենք, որ նա էջիթոմանի Մովսէս Կաթողիկոսի շահն աշակերտած էր եւ նրա հրամայով էլ, իբրեւ ներքակ էջիթոմանի, գնում է զաշխարհն արեւմտական՝ յԵւրոսեոսան եւ ի Հռոմեոսաւան, անցնում է Լեւնտաւանի Բլով ջաղաքը, որովայն իր զայցր եւ չեղ ընտարութեամբ վերջ տայ տեղի Հայերի մէջ ծագած դատանական խռովութեանց եւ ապաւորումը Նիկոյ կային: Բարսաղիշին համարել է, թէ կարել է ի պատիւ Հրապիրէ: Դարեւի յետոյ նա վերադառնում է Կ. Պոլիս, ապա Նոր-Ջուղայի ժողովրդին առաջնորդ է կարգւում: Անա Դարբինցու վկայութեամբ (էջ 402) .

«Ենաթրոյի կաշառար վարդապետն, որ յովով կարմնց վարք եւ ժամագիրք տալարեաց... ի Մովսէս կարողակիւտով առաջնորդ կարգապէս էր Ջուղայիցոց ժողովրդեանն, որք յԱղայեան Բաղաշին էին»:

Անս պատմաշրջանի այս լուսագրին գրաշուկիրը, խորապէս ըմբռնելով ուսման եւ դասութեան փն հշտմտութիւնը, ամէն ջանք գործադրում է Նոր-Ջուղայի Ամենա-

փրկիչ վանքում մի ուսման տանձր պահել: Նա խոր կոնկրետ տեսնում է, թէ մի ամբողջ ժողովուրդ ինչպէս խորհարում է խառնել եւ նախադաշարումների մէջ: Տեսնում է, թէ աղիտութիւնը, յետադիմութիւնն ու անտախտաշուտութիւններն ինչպիսի ասիւրներ ու շարքեր են գործում նրա կանգնած: Պէտք էր զործել տիրող ճանճում: Անհրաժեշտ էր զպրոց կառուցել, նոր սերունդ կրթիլ ու դաստիարակել, անշուշտ նրա սիրուն ու հոգին: Անհրաժեշտ էր փառաբան տիրող խառնը եւ լոյս տրուել խալան, ամայի դաշտում: Մանր, հոգեմաշ ու քրտնաշան աշխատանք էր դա, որը պահանջում էր աննկուն ոգի, ուժեղ կամք, անպատ ետեղը, Համբարտար զործունէութիւն եւ անսահման զուարերութիւն: Խաչատուր Կեաւաբցին օժտւում էր այդ առանձնաշատութիւններով: Վեհ, լուսաւոր նպատակի Համար նա կոնք չի ամուռ դժարութիւնների ու խոչընդոտների առջև եւ ա՛տ, անմեղ, ետեղյաւան այդ Հոգեւորականը, Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքում քանում է մի զպրոց, ուր Հաւաքում է աշակերտներ եւ նրանց կրթութեան, դաստիարակութեան ու յառաջողութեան Համար գտնում է ինչ որ յաւագոյն է, ինչ որ Հարաւոր է: Նրա ազիւ ջանքերով էլ կրթական զորքը Հանում է ա՛յ միայն նախամանկ դրութեան, այլեւ Ամենափրկիչ վանքը գաղտնի է դրական ու մասաւոր շարժման մի կենտրոն: 17-րդ դարու պատմագիր Առաքել Դարբինցին այդ զբոյրցի պատկերը գծում է այդպէս .

«...Յօրինեաց զհամալսարանս՝ յարում շատուցանէր եւ մարդէր զհամարակազմուն ի գիտութեանն հնոյն եւ նորոյ կապակաւանաց, եւ զհամայն արեւմտաւս ապստակաւսն, և զգերբնադարացաւսն: Ուսուի հանէ մեզ կոչել ամա կայր կառարակաց եւ պատմաւ կրկին լուսաւորութեան ազիւս Արամեան, եւ նախակիր հնդկանկ սրբոց տանս մերոյ շինութեան եւ քարակազմութեան՝ որ ի Նոր-Ջուղա, եւ արմատ ամնախորեան, վայելչութեան եւ պայծառութեան՝ ազգիս մերոյ...»:

Եւսաւոր զգալուք է Եւս ապարանի կորերը: Բայց դա մի պատմական երեւոյթ չէր: Դպրոցը զուրկ էր զգրքերից, իսկ աշակերտները կարտ էին դատարգրերի: Անհրաժեշտ էր զպրոցի կոտեքն հիմնել մի այլ ուսստաւ: Ընա՛, մի ապարան: Դա նոյնպէս մշակայնային մի խոշոր ձեռնարկ էր: Կեաւաբցին անցնում է աշխատանքի եւ 1639 թեականին վանքում Հիմնում է մի մասուլ: Դա

իրանահայ առաջին տպարանն է։ Ուշագրու-
մն է, որ ինքը՝ Կեսարացին, իր ժխարանների
հետ, հերոսական ջանքերով տատեր է փո-
րագրում, ժամուկ յարմարեցնում, մինչև
ինչ թուղթ է պատրաստում և սրանից ու-
ղից երեք հարյուր տարի առաջ, 1640 թա-
վանին,* զբաղում աշխատանքամբ տպա-
րանից լայն ընծայում զՎարժ շարանց զեր-
քը։ Ահա թէ նա իր գրքի յիշատակարանում
հիշելուի տողերով է նկարագրում իր հոգե-
մայն աշխատանքի պատկերը։

«Թիվիմ ՌՂ (1090 առաւել 551** հաւասար
է 1641) ի քաղաքն Շօշ, որ է Սպահան, յա-
մապատն Նոր-Ջուղայու, ի քաղաքորութեան
Պարսից Շահ Սեփուան յիշխմանքեան գիւ-
ղապաշտին Ջուղայու իշխանագունի պարոն
հօտայ Սափապին իմաստուն իւրաքսպատի,
ձեռամբ իյալատուր վարդապետի կնարացե-
ալ, Ար քաղում աշխատութեամբ հանդերձ
միաբան ուխտիս հաղիւ կարգադատ այս-
լափս ի յայտ քերիլ, զի ոչ ուսաք յաւմէն։

Տպագրութեան արեւոտի տեսակէտից՝
շատ անգամայն հրատարակութիւն է զՎարժ
Շարանցը, իսկ յոյզն առաջին փորձ ո՛չ
միայն թողնում է մի զնկեցիկ տպաւորու-
թիւն ևս արեւոտի է ուշագրութեան, այլ և
պատիւն է քերում Կեսարացուն, որ կարողա-

ցել է սոսկ անային միջոցներով ամեն ինչ
յօրինել անհատական աշխատանքով և հիմք
գնել իրանահայ տպարութեան»⁸

Ահա մշակութային այդ շարժումից ա-
ռաջ, նոր զարգացման քառակուսի թափան-
ներէ վերջերին, Նոր-Ջուղայում կառուց-
ւում է Բեթղեհէն եկեղեցին։ Այդ են վկա-
յութ պատմական կոթողի պատերի ոսկեղեր
շուտ արձանագրութիւնները, որոնցից զբա-
ւում է ուշագրութիւնն նախ՝ եկեղեցու դռնի
կողմը, դռան նշակաւին, զորմուտան յիշա-
տակարանը։ Դեղին, ծագկապարզ յաճա-
պակէ շրջանակում անուան ևս կապտա,
վարդապարզ յաճապակու վրայ սպիտակ
տառերով քանդակւում են զնկեցիկ յիշա-
կալիքն է դա, որից պարզւում է, թէ 1628
թաւանին միայն վերջնում են եկեղեցու
կառուցման աշխատանքները։ Այնուհետեւ
անցնում են 127 թերիւր ու մի տարրինը։ Այդ
ժամանակաշրջանում եկեղեցու որոշ մասերի
աւերում են ևս կարողանում նորոգութեան։
Այդ նպատակով էլ Նոր-Ջուղայի առաջնորդ՝
Մաղաքիա Արք-Սպիտակոյտը գիտում է քո-
րեպաշաւ Հնդկահայերին և ինքնուրում նրանց
նիւթական աշակերտութիւնը։ Առաջնորդի կո-
չը շուտով արձապանք է գտնում։ Կաշկարթա-
յի Հայոց Նաղարէթայ եկեղեցու վարչու-
թիւնը, Արզարանի Ընկերութիւնը և այլ հա-
րուստ Հայեր պատմական եկեղեցու պայծա-
ռացման, քանդաքարութեան համար արա-
մադրում են իրենց նշէրները։ Կարճ ժամա-
նակում, Գ. Յովսէփ Արզարանի միջոցով,
հանդանակում է 3423 ուսիքի։ Այդ գումա-

*Գուտեմբերգի տպագրութեան գիւտից
186 տարի ևս հայերէն առաջին գրքի իրատա-
րակութիւնից (1640 նուազ 1512) 128 տարի
յետոյ։

Ա. Ե.

**Հայերը Պարսկաստան գաղթելուց յե-
տոյ իրենց համար սահմանեցին մօր քա-
կան (551) և ամիսների մօր ամսներ։ Հնա-
բոլոմ էր Ագարիս, որի ամսամուլ էլ կուսեց
սօմարը։ Ահա Ագարիայի ամիսների պատ-
կերը՝

Շամա	30	Յունար
Աղամ	30	Փետրար
Շրաք	30	Մարտ
Նախայ	30	Ապրիլ
Ղամար	30	Մայիս
Նաքար	30	Յունիս
Թիթայ	30	Յուլիս
Դամայ	30	Օգոստոս
Համիրայ	30	Սեպտեմբեր
Արամ	30	Նոյեմբեր
Ռվդան	30	Դեկտեմբեր
Նիրիան	30-31	Գնկտեմբեր
Անկնամ	5	

*«Հայր հասարակաց» վաղապակար
վարդապետը վախճանւում է 1646 թաւանին
Նոր-Ջուղայում և քաղում Ամենափրկիչ
վանիչ եկեղեցու սեղանի ներքին։ Նրա տա-
պանմարի վրայ քանդակւած է՝

«Ի հանգստի աստ ամփոփի՝ մահուր մարմին
վարդապետի,
հաշարադր քրքաղանի՝ հետևողի Տեառն Յի-
սուսի,
Որ էր տեղեալ Կնարացի՝ գործով սուրբ,
հեզ և արի,
Բարձեալ յաւ իւր գլուծ Քրիստոսի՝ առաջ-
նորդէ նորին հօտի։
Նրեամուտայ յայս գործ յամնին՝ ամա Տառիլ
յայսմ արձալ,
Կրէ յամնին զվարս ամմարմնի՝ մնայ մինչև
յիսուս վնիք,
Յաղցարաքացն նա գառի չափար Ղ. և Ե. Ե.
թուէ» (1095 առաւել 551 հաւասար 1646)

րով էլ վերանորոգում են եկեղեցին, խնայելու վկայում է արձանագրութիւնը.

«Յամի

1628 Ս. եկեղեցիս հիմնադրաւ
Գերանկար ոսկիապատ զարդարեւ
Յճարաց 20 ամաց տարաւի
Ջեռարմի հօշա Պետրոս վէշիքանի:

Եւ

Յամի Տեառն 1899

ի հայրապետութեան Տ. Տ. Մկրտչի Ա. Կա-
րաղիկոսի ամենայն Հայոց
Յառաջնորդութեան Տ. Մաղաքիա Ս. Եպսին.
Ջուղայաւ
ի քաղաքութեան Պարսից Մօզաֆէրէղիմ
Շահին

եղև

Նորոգութիւն Սր. Բեդգախէմի եկեղեցոյս
Բարեկարգող նախարանաց Հնգկարմալ Հա-
յոց

Սր. եկեղեցիցն Նազարեթայ նուիրեալ 1,000
կօ՝ ովս

Գեր. Պրոյճ. Արգար. եւ կօ.* նուիրեալ 1,000
կօ՝ ովս

Եւ այլ ունամք մեծ. պրնճ. նուիրեալ 1,423
կօ՝ ովս

Հանգանակութեամբ պրն. Յովսէփայ Մ.
Արգարեան

նախի

Նուիրատուն յիշեցին միշտ առաջին անմահ
Գառնի Աստուծոյ:

Ներսէս ժամուս եկեղեցի: Վերին առ-
տինանքի գրանիշ է առաջին տապաւորութիւնս,
երբ դրսուած եւ տեղ-տեղ իշխող սակեղբի որ-
ժանագործութիւններէ հետ ներքաշանկող զե-
ղարեւոտական որմանկարները, որոնք թ-
րեղ զուսպեղեղ երանցներով, արեւի սակե-
ղոյն շողերէ ասել, ներկայացնում են մի Հը-
ժայիշ տեսարան:

Կանգ եւ ժամուս ամենատառքին դասուած
եւ կարգուած ալ եւ ձախ պատերի վերեւի պա-
տուհաններէ ասել զորչւած սակեղբի արձա-
նագործութիւնները: Դա եկեղեցու աւարածան,
իրանի ժամանակաշրջանի թաղաւորի, էջ-
միսանէ հայրապետի, Նոր-Ջուղայի թեմա-
կայ տառնորդի, վերջապէս բարեբար Խօջա
Պետրոսի, որս սրբու եւ ծնողներէ անուննե-
րը պատկերող մի թանկագին յիշատակագիր
է, որն առաջ եւ բերում այստեղ ամբողջու-
թեամբ:

*Արեւիկան ընկերութիւն:

«Հազար Հ եւ ի Իսիմ (1077 առաւել 551 հա-
տասար 1628)

Որ էր անցեալ, Հայոց ազգին
Աւարտեալ եկեղեցին,
Գերանկար եւ պմնաշին,
Համամամ աղին դրսխան
Եւ կամ Նոյեան սուր տապանին.
Ի ժամանակա Շահբաին,
Եւ մեր սրբոյ հայրապետին
Տէր Մովսէսի Բաշ Խոնտորին,
Դիտապետի այսմ նախագին
Հեղանդի Տէր Խալատրին,
Որ շինեցաւ ձեռամբ մեծիմ
հօշայ Պետրոսն ցանկալին,
հօշայ Պօղոս քրդի նորին,
Մա փափագամբ աստուածային՝
Մակս յիշամբ հազիս նոցին,
Մնոգաց սորին վէշիքանին՝
Շուշան ամուս մօրն նորին,
Տէր Պորթնսցի ամենասին:
Որք հանդիպի տնկիւսամ սորին,
զհօշայ Պետրոսն բազմային,
Յիշեալ լինէր միշտ արժանին,
Որք յիշեն յիշեալ լիցին յաւիտենին:

Հայտնաց գրաւում է սեղանի սակեղբի
առաստաղի կենտրոնում, կլոր ժեմաղբի
չըմնակում, վրձնում մի նկար: Դա լու-
սապալի Յիսուսն է, որի խոհուն ու պար-
ծառ աշխարհ արտայայտում են անասման
բարութիւն, հեղեթիւն, անձեղութիւն եւ
պարզութիւն: Նրա ստեղծի ասել, սակեղծ
Փօնի վրայ, սեւաղբի ճանդակում են հե-
տեւեալ ազգեր:

«Յիշեցէ ի Գրիստոս զհօշայ Պետրոսն,
Որ շինեցաւ ձեռամբ մեծիմ հօշայ Պետրոս
այլ ցանկալին,
Հօրն իւրոյ վէշիքանին եւ մօրն Շուշանին,
Տէր Աստուած Պորթնսցի սոցին
Թիվն Ռէնէ: (1077 առաւել 551 հաւասար է
1628):

Անցնում եւ եկեղեցու երկրորդ դասը,
որ ձախ պատի վրայ, «Հողեղարուստան եւ
«Վերտփօխուսն Մարիամն խորազրով որ-
ժանկարներէ վերեւ ժառուս, աշխարհա տ-
առ ձեռնաշինում է մի սակեղբի արձանա-
գործութիւն: Դա Խօջա Պետրոսի եւ Նրա Հարա-
պատենի անունը պատկերող մի յիշատակա-
գիր է, որ սկսում է այսպէս:

«Յիշեցէ ի Գրիստոս զհօշայ Պետրոսն
Եւ զմեզան վէշիքան, Շուշան
Եւ զհարաբն Կիրակոս՝ Միմա՝ Ջվանին Սա-
փազն:

Յիշեցե՛ք եւ Աստուած ռդորմի՛ն ասացե՛ք :

Դարձնալ յիշեցե՛ք ի Քրիստոս զեօջա Պետրոսն

Եւ զողակիցն Աննային եւ զորդիքն Խօջայ Պողոսն

Եւ Մինասն Ռեանէան եւ զվերջին կողակիցն Թանգմէրն

Եւ զորդին Ղուկաս Երվան Ռէլէ 1077 առաւել 551 հաւասար է 1628) :

Խօջա Պետրոսի կենսագրութեան մի ուրոյն էջը տարբոր ուշագրաւ մի արձանագրութեան է զա, որը վկայում է, թէ նա աւանանցել է երկու անգամ : Այնուհետ յիշատակում են թէ՛ առաջին ժեռած կնոջ եւ թէ՛ երկրորդ կողակցի անունները :*

Մտածեալ եմ կեկեղեցու երկրորդ դասի աջ կողմը եւ Վճռուած Քրիստոսի խորհրդով արձանկարի ժառ կտրուած Խօջա վանականին եւ նրա ընտանիքի անդամներին ներքեւ Հեռեւեալ արձանագրութիւնը .

«Դարձնալ յիշեցե՛ք ի Քրիստոս զեօջայ Պետրոսն

Եւ զԺնօղն Վէլիքանն, Շուշանն

Եւ Խօրեղբարքն Նուրիքանն՝ Դրիգորն՝

Փամայն՝ Եղբորորդին Դասպարն :

Դարձնալ յիշեցե՛ք զեօջայ Պետրոսն

Եւ Խարսնէրն Մուրսն՝ Սանդուխտն՝ Ռեղիդէն՝

Եւ գրեռնէրն Ակոբջանն՝ Ռեանջանն՝

Մարտոն՝ Մաստրուսն յիշեցե՛ք :

Եւ Աստուած ռդորմի՛ն Տէր Առաքել զրգաւ :

Վերջին տօրը շաբաղանց կարեւոր Նշանակութիւն ունի, որովհետեւ վկայում է, թէ յիշատակագրերի գրօղն է Տէր Առաքելը :

Բայց՝ զմիջին շրջա տարրեր ակերտում եւս, կտրուած Գրեռնի կերտած ընթանակներում, գրեռնած են ոսկեղբի արձանագրութիւններ, որոնցից մի երկուսը, գործադարար, ա՛նքան են եղանակել, որ Հաղի Նըշմարտում են : Անա գրանց գրասկերը .

«Յիսուս Քրիստոսի ծառայ զեօջայ Պետրոսն՝

Եւ ծնօղն իւր զՎէլիքան եւ զՇուշան

Եւ զեղբայրն Սուրիպոլ՝ եւ զվերակոս

Յիշեցե՛ք ի Քրիստոս :

Դարձնալ յիշեցե՛ք զեօջայ Պետրոսն՝

Եւ զկողակից իւր զԱննային

Եւ զԳիւս կողակիցն իւր զԹանգմէրն .

Տէր Աստուած ռդորմեցի :

*Սոյն արձանագրութիւնը սխալ է տըղւում «Նոր-Ջուղայի Պատմութեան» 175-րդ էջում : Ա. Ե.

Դժուար է առանց յուշումի կարգաւ պատկերի արձանագրութիւնները, որոնք 17-րդ դարում կառուցւած զեղարեւոտական մի կոթողի պատմութեան ներքեւ արժէքատր յիշատակարաններ են եւ լուս. երախտագրութեամբ պահանջում են հիմնադրի հօշա Պետրոս Վէլիքանեանի պայծառ անունը :



Պատկ. 1. Խօջա Պետրոս (Բերդինէմ Եկեղեցու «Իրախոս Որմանկարից»), Եր. 25

ՈՐՄԱՆԱԿՆԵՐԸ

Պատմական կեկեղեցու փոռքն ու Հմայքը կտրուած են 17-րդ դարում փորձեալ մեծադիր, գաւառեղ արձանկարները, որոնք մի վեհակիւն ունեն իրենց մէջ՝ խորհրդաւոր ու զեղեցիկ : Այնուհետ զէմքերը կենդանի են, խօսուն, զգեստները գտահան, իսկ բաղմապան Հմայիշ երանանքին, սուրենքին ու զծերի սցանչիկ Հարմանքին ու Հարապատմութիւնն որոշ արձանկարներում Հասել են արեւատար ա՛նքանի ներութեան, որոնց առաջ մարդու ընդուն Համար է կտրում եւ Հոգին է միայն զգում, խօսում ու ապրում մի

զեղարեստական վտայեր: Եւ իրօք, ա՛ւմ երբ եւ իցե վիճակել է ժամերով զիսել զոյնե-րն այդ դարձածախ խալտարչէտութիւնն ու ներգաշնորհութիւնը, ժամանակը իրար ներ-հով անձնան երանդները նուրբ գաստարու-թիւնն ու զեղեցկութիւնը, նա միայն կ'զգայ նրանց բանաստեղծական համոզը, որ ա՛ն-գամ խորհրդաւոր է ու զուրկեան:

Որմանդարական այդ կիթաղը եւս սերտ կերպով կապուած է Պետրոս Վէլիճնեանին անասն հետ: Ինքնատիպ, ուժեղ, ժիւր եւ նա-խաճենոյց նոր-Ջուզայեցի վանաստեղծն արձամարհելով աշխարհագրական տարա-ժուկիւնները, ինչպէս անտառք, առեւտրո-կան գործերով անցնում է հեռուստ Նորիցան-ներ, զէպի արեւմուտք, ուր շփուելով քաղա-քայրիւթ, լուսաւոր ծագութիւնների հետ եւ մասնատեղ Բապլախում տեսնելով նկու-րայաբոլորած եկեղեցիները, ո՛չ միայն հա-րառացնում է իր մասուտ աշխարհը, այլեւ զարգացնում իր զեղարեստական նաշակը: Վերադառնալով նոր-Ջուզայ, Խոջան տուն է բերում մեծ հարստութիւն եւ հաւկայտու-թիւններ Նարայանի կեանքի, մշակութիւն ու արեւատի մասին: Քեթիւս այդ հանգամանք-ներով էլ պիտի բացատրել, որ նա իր կոտու-ցել աւան եկեղեցու պատերը վրձինել է առ-լիս մեծապիւր պատկերներով, զարգանկա-րներով, բիւրեւ ճանդակներով եւ ծաղկանկար-ներով: Այդ յաշարմանն էլ վկայում է, որ Խոջա Պետրոսն ամբողջապէս չի ներսում իր առեւտրական հաշիւներին, այլ սպարում է նաեւ հասարակական կեանքով, հանդիսա-նում է զեղարեստի ջերմ պաշտպան: Դա ինքնին մի ուղարկու երեւոյթ է, որն ընդ-գծում է խիղիւր վանաստեղծի զեղարես-տական ու առաջգիւժական ոգին:

Սակայն, որմանդարների բարձր արժե-քի մասին էլ ունի ցույցանք զազաբար տա-լու համար այստեղ պարզվեց նկարչական մի կարեւոր հանգամանք:— Ո՛վքեր հետեւել են վերածնութեան մեծ գորգեւանների՝ Բաթա-նիի, Ռուբէնի, Լեւնաբո-Դաւիթնիի, Միլէշի-Անդրէիի հոյակապ արեստին, ո՛վքեր ծանօթ են նրանց արտադրութիւնների կա-սարկելութեանը, գիւժութեանը եւ խորու-թեանը, անշուշտ միայն նրանց խորապէս զգացած իր լինելն այդ մեծ արտիստների վրձինի աստուծային խաչք շունչը: Ամօքնու-տելի է, որ նրանք կեանքի կամ բնութեան ա-ճին մի երեւոյթ, տճին մի զառափար, տճին մի զեժք, ամեն մի պատկեր արտայայտել են գոյններ, զմերթ ու սոււրների ա՛նձպիսի

խաչք ընդհանրացումներով, ա՛նձպիսի հը-ջօր համադրութեամբ ու ներգաշնորհու-թեամբ, ա՛նձպիսի խոր ապրումներով ու խանդավառութեամբ, որ խաղաղութիւնը զի-ստեղի տաւաճարգում են ստեղծագործութեան մի նոր աշխարհ եւ համակում հիացմունքի, պատկաւանքի ու հպարտութեան զգացում-ներով:

Բեթիւհէնէ եկեղեցու որմանկարները եւս իրենց հիմքում ունեն մի զեղարեստական զազանիք: Այնտեղ կան նկարներ, որոնք ար-ւեստի տեսակէտից արգիւնք են ո՛չ միայն խոր զգացումներ, ոգեւորութեան, այլ եւ նկարչական մի բարձր մաշկոյթի: Այդ հա-նգամանքը պիտի բացատրել նրանով, որ մա-ժանակի տաղանդաւոր նկարիչներ կարողա-ցել են խորապէս ապրել իրենց ստեղծագոր-ծական նիւթերով, թափանցել նրանց էու-թեան մէջ եւ հարապատ ներշնչումով վերա-կենդանացնել, վերաբարդել հին ու նոր աշխարհների, հեթանոսութեան ու քրիստո-նէութեան բարոյական հաւկայտութիւննե-րի պատմաբանքը: Այդ արեւատի մէջ երե-ւակայութեան ու մտքի զարմանալի թուիչք կայ, որի մէջ նրան խորանում էք, նախ-քան էլ զգում որս զեղարեստականութիւ-նը: Առհասարակ, եկեղեցին իր ամբողջու-թեամբ որմանկարական արեստին մի զե-կեցիկ թանգարան է, ուր մի շարք պատկեր-ների ներութիւնը, հարապատ զեղեցկութիւնն ու խորութիւնը եւ մասնատեղ զոյնդգոյն ու հաւկադի երանդների սքանչելի ներդաշնու-թեանը ո՛չ միայն խառնւում են նկարիչների հմուտ, ձեւակերպով վրձին, նրանց ինք-նուրոյն տաղանդի ու նուրբ նաշակի մասին, այլեւ ազգում են ու թափանցում մեր արտի, հոգու, զգացումների վրայ եւ զուգ ապրում էք նկարչական պեղելաբայ:

Բովանդակութեան տեսակէտից որմա-նկարները վերջում են քրիստոնէական պատ-մութիւնից եւ ունեն կրօնաւոր-բարոյական բը-նայթ: Աւելին: Իբրիւնական արեստին իր ըն-տիւր բաց զաստիքիւ է զա, կրօնական բա-նաստեղծութեան մի աքանչելի սէրիտ, որի ամեն մի էջը, տճին մի նկարը տառնում է մեզ զէպի պատմական անցեալը, զէպի քրիստո-նէական յեղափոխութեան գորաբընդներ եւ մեկնում է ու պարզարանւում Աւետարանի այս կամ այն ուրոյն էջը: Ամեն անգամ ե-կեղեցի այցելելիս եւ պատմական որմանը-կարների գաստական զեժքերն ու զգեստների գիւտելիս, մեզ զգում էք համարեւ մի նոր աշ-խարհում: Թեւում է, թէ տպւում էք երկու

ախրան հրձուները — քրիստոնեական և հեթանոսական — պաշարի շրջանում։ Եւ յիշատի, զա նկարչական աշխատանք յուշարձանն է, որ կանգնել է Հայաստանի նոր սերունդին պատմում է, ուսուցանում, թէ ինչպէս քրիստոնեայ ժողովուրդը յանուն իր բարոյական բարձր ինչոյն՝ աճեցնել է տանելու և օրհասական պաշար մղել հեթանոսական աշխարհաւանդակութեան ու մատայնութեան դէմ։ Պատմում է նաեւ Մեծ Մարզաւորի անուան, անասման տանջանքների, քրիստոնեայ դրօշակակիրների անդադունտ օտաւապանքների մասին և արձանագրում ա՛յն մեծ խորհրդի էութիւնը, որ լծրանել ու նաւազել է զարթիկ խորքից եկած հաւատացեալ ու քրիստոնե ժողովուրդը։

Սրժանիկները միասնամեակ վկայում են, թէ ինչպէս այնպէս ստանալ շնամայով հեթանոսական հայտանքների, բարբարոսութիւնների և քանութիւնների միջից բարձրանալով քրիստոնէութեան աղին ցատումը, զբոլովմունքն ու զարթոյթը, ո՛չ միայն յաւանել են հեթանոսութեան ասանդական սանձանքները և իրենց յայտնական ընթացքի մէջ առել նմադին սկզբունքները, այլեւ հեղեցիկ են սրբայ, եղբայրութեան, նշարասութեան, արդարութեան և վերջապէս մարդասիրութեան վանն ու բարձր գաղափարները։

Բայց այդ սրժանիկները մի ուրիշ մեծ խորհուրդ ունեն։ Գարաւակ մասաւոր խաւարը և լուսաւորելով մարդկանց միտքը, հաղցնել նրանց բարոյական կոտորելութեան, սրղկսի նրանք խոր լծրոնեն և հասկանան իմաստն ու փիլիսոփայութիւնն աշխիզնայի, որ չիմուած է սրբի մաքրութեան ու մաքրկանց երբայրութեան վրայ և որի չիմանական նպատակն է ո՛չ միայն կոտորակների մաքրկութեան սրղկն ու ամբողջական ներդաշնակութիւն, այլ և կանգնեցնել նրան վեհ, զեղեցիկ, բարի և նշարիտ նաւագարի վրայ և աչք ուղիղով քոչափանել սոյն աշխարհն Աստուածայնի վրայ ճշնով։

Արձանագրերը և աշխ. որ սոյց սրժանիկներում քրիստոնեական աշխարհաւանդակութեան լիրիզմն ու եղբայրական դրօշակակութիւնը, ինչպէս և հեթանոսական դադափարարասութեան հերոսամարտը միասնական և 17-րդ դարի նկարչական արեւոտան վեհութեան ու հնային երանգների հետ։ Եւ ինքը, աշխույ կան մի քանի պատկերներ, որոնք իրենց նրբութեամբ ո՛չ միայն ներգործում, այլնապնում են խորքանշիր այ-

ցիւրի զեղադիտական նաւակը, այլեւ իրենց զեղարեւատականութեամբ զերազանցում նախնիկ նոր-Ջուղայի Անճափորիչ վանքի զեղեցիկ սրժանիկներին։

Անցնում եմ տունձին նկարների համապատ վերլուծութեան։

* * *

Ժողովրդասոյի աշ կողմը, երեք աստիճանների դիտարկութեամբ, ուշադրութիւնս դրաւում է մի մեծագոյր սրժանիկար, որի տակ, աշ կողմը, սակեցած տուեղով մակադրում է. «Մարիամ տալիս ի ձեռն Բաղնալայիսին»։ Դա մի նուրբ վրձինն արտագրութիւն է, որի կարմիր, կանանչ, կոպրտ, սպիտակ և այլ երանգները հարձուներն ու զէմքերի հարադասութիւնը խոսում են հմուտ նկարչի բարձր արեւտի մասին։

Նկարի գրեթէ կենտրոնում կանգնած է լուսադասի մանուկ Յիսուսը, վառ կարմիր հագուստով, Առաջնորդն է նրան կողողող ասարայ հաղած և մաք մեղքն երկրեղանութեամբ կրճքն դրած, բարեմեւ, պարթեւ հասակով և հեղաւոր Մարիամ Աստուածածինը։ Դիմացից զիմաւորում է մի բարեմա քաւանայայտեւ։ Դա Սիմէոն Ներուանն է, հին աշխարհի մի նաւապետ, որի աշեղարպ փորթիկ միտքը զարգացում է լայն կուրծքը։ Նրա պատկանակն ու խորհրդարար զիմադի վրայ կարգում եմ եւ հեղութիւն, եւ բարութիւն, եւ արդարութիւն, եւ քրիստոնեական քրժեանդութիւն։ Նա մեղքերը պարզել է երկրեղանութեամբ. կարծես պարտաւորում է զրիկ մանուկ Յիսուսին։ Նրա զէմքն արտայայտութեան տունձին փայլ են տալիս զլին սակեցոյն խորքը, կոպրմի-կանանչ զիմաւոր և մանաւոր Իրանի ծաղկաւուն սիրուն հաղուստը, որ զմաքրում է նկարչի նուրբ վրձնով։ Մարիամ Աստուածածին մօտ կանգնել է երկար գաւազանն աշ մեղքին բռնած մի նոյնի, որի բանասեղանական սիրուն դրսին ու նախաւոր ծածկել են յիկուսուն մաքրի պատկեր և ներդաշնակում են զկոպ աշ թեղած փառահեղ չիկադոյն միտքի հետ։ Դա մէկն է ա՛յն զէմքերից, որի արտայայտութեան վեհութիւնը խոր տպագրութիւն է թողնում։

Այս սրժանիկարի մօտ իշխում է զեղարեւատական մի այլ սակեցածութիւն, որի տակ կարգում եմ. «Աննիմիլ Մարիամ» (Գ. 2)։ Դա բարեմեւ, հարուստ կուրծքով, հեղութեան տիպար Ս. Մարիամ կոյսն է,

որ կիսամեծադիր, մեղմօրէն յենած քաղկա-
թունն, աղբակայրերը մեռնին եւ մախ մեռնի
երկու մասերերով քեզուքեկամբ բանած զգես-
տի վերեւի մասը, ողջունում է Գարբիէլ
Հրեշտակապետին: Երկու սքանչելի եւ դրա-
ւել զէմքեր են զբանք, երկու տարբեր զե-
ղեցիութիւններ: Մէկը միայն կենդանի, խո-
տուն եւ բանաստեղծական: Հրեշտակը մախ
մեռնին բռնել է մի սիրուն շուշան, իսկ մայր
քեզուքեկամբ բարձրացրել է զէպի վեր եւ
երկու մասերով ցոյց է տալիս աղանդաւ ե-



Փատկ. 2. Անտիոքի Մարիամու. եր. 12

բեռնյալով երկնքից իջող սուրբ Հոգին, կար-
ծես նրա շրթերը լուռ արասանում են:
«Մարիամ, քո մէջ է Հոգին սուրբը: Չու-
շրթաստանի Բեթղեւէմ քաղաքում պիտի
ծնու այն որդին, որը պիտի փրկէ ժողովը-
դին քի մեղքերից»: Կոչիլի ոտքերի մաս, զե-
ղաբանակալուն ոսկեղուն ծաղկամանում,
ձայնում են ծաղիկները:

Որժանկարը իջեցնում է ինձ Բաայթա-
յի Ձեռնով քաղաքի Դերացցո-Պալլա Վէլի-
նի գեղարեսնական պատասում առանձ, գե-
րանախման յայտնի նկարի՝ Տիգլամի վեր-
մեծած «Մարիամ Մաղթապետային»: Դա
նոյնպէս քարձեւ, Հարուստ կուրծքով, շրջ-

նաղ, ջերմեռանդ մի կոյս է, միայն ա՛յն
տարբերութեամբ, որ նրա աչքերը կարծրել
են լացից եւ վառ այտերի վրայ իշխում են
երկու կաթիլ մարգարտաշար արցունքներ:
Այստեղ տաղանդաւոր նկարիչն արտայայտել
է Մաղթապետու խոր վէշը, իսկ այստեղ
ցոյանում է Մարիամ Աստածածնին անձու-
ն երանկութիւնը, որ աւանում է սիրուն եւ
բարեզէմ Հրեշտակը: Նկարչական աճին մի
թանկարան սիրով կը Հնդրեմիտէ այս նուրբ
որժանեկարը, որին տունմէն փայլ են առլիս
կարմիր, կապոյտ, վառ զէպին ու քայ կո-
նանշ իշխող երանցները:

Բաժանելով այս զեղեցիկ նկարից,
կանդ եմ առնում «ՄԵԱՆԱՅՑ Քրիստոսի» խո-
րադիր կրող մեծադիր որժանեկարի առաջ:
Դա Բեթղեւէմի պատմական մասին է: Այդ-
տեղ է նախ զիւթիշ, քարձեւ մարմնով, լու-
սապասկ Մարիամ Աստածածնինը, որ ծնե-
րապիր ու մեռնածած, քեզայշ, սիրով լի աը-
տայայտել աչքերով, նայում է խանձարու-
րի մէջ փաթեման իր սիրատուն գաւաղին
— նորածին Յիսուսին: Այնտեղ են եւ երեք
քաղկալաւ մողերը, որոնք, առեւ, արեւե-
րից նոր Հասել են Բեթղեւէմ եւ իրենց շրթե-
րի վրայ մըմնջում են: «Մ»-ը է Հրեաների
ծնած թագաւորը, որի առաջը տեսնող արե-
ւելքում եւ եկել ենք երկրպագելու: Աւ Շը-
մարիս, նրանք երկրպագութեամբ երկրպա-
գում են Յիսուսին, ներկայով ոսկի, կնդրակ
ու դոնուս⁶ Երեք գրաւիշ զէմքեր են դրոնք,
տարբեր Հայեացքներով ու զմարտութեամբ:
Նորմեցից մէկը գուրգուրանքով ուսին գրել
է մի սիրուն գաւառի, իսկ Մարիամի եւ ա-
ռալին մողի մաս կանգնել են մի կուռի ու մի
սշխար: Նկարում իշխում են կապոյտ ու
կարմիր երանցները:

Ահա եւ «Քառասնօրեայ տաճարն» ոսկե-
լոծ տեսնելով մեծադիր նուրբ նկարը: Եե-
տըւած եւ տիպիկ զէմքով քաճանաչապետ
որձում է նորածին Յիսուսին: Դա մի ծե-
րանի Հոգեւորական է, որի կենդանի, պա-
շտա արտայայտութիւնը եւ արածալը փո-
րիկ միջուկն տունմէն գրուելու թիւն են աա-
լիս նրա խոտուն զէմքին: Աստուծաբերում
եմ զէմքի ուրոյն զմեքը, որոնք վկայում
են, որ այդ ձեւ արտի մէջ ա՛յնքան քաղու-
թիւն, Հեղութիւն կայ, թէ նա մարմանցում
է առաքելութեան եւ քրիստոնեական ջերմե-
ռանդութեան: Նրա մաս կանգնած քաճանի
քեզուքեկ զրկել է լուսաւորան Յիսուսին, որի

⁶ Անուշահոտ խումկիր:

բարի գիտազնի վրայ նկարիչը պատկերել է ջրխառնեական գազափարքի էությունը: Գառնառայալետի աջ եւ ձախ կողմերում գծւած են երկու տիրացուներ, երկար մոմակաշնեւր ձեռքերին: Վառապ մոմերի հարադաս կաթիլները վկայում են նկարչի վրձնիչ հմտութեան մասին: Այնպէս է նաեւ լուսապլուսակ, քարեզէմ Մարիամ Աստածածինը, որ ծննդոգիւր, խռնուն եւ զորովալուսի հայեացքով նայում է Յիսուսին: ձեռքին ունի



Պատկ. 3. Ալլանիերալուիւն. եր. 14.

մի փոքրիկ քայ կողով, որի մէջ նստած են աղանդներէ երկու սիրուն ձապուկներ: Մօտն իշխում է մի աջ քարեպաշտ քաշտնայ, իսկ զնոսքը, սինեքի մօտ, կանգնել է քարձրաւառակ, զեղեցիկ, նուրբ իրանով Մարիամ Մազթապիկային: Եկեղեցական գունազգից զգեստները եւ քաղձաղան գոյները սքանչելի հարմարեմտ անուններն փայլ են տալիս որմանեկորին:

Թեւում աճ գէղեր աջ եւ զիսում նկարչական մի աջ զմարտութիւն: Դա Ալլանիերալուիւնն է, (եր. 3) 2 մետր երկարութեամբ եւ մի մետր ու 60 սանտիմ լայնութեամբ: Նկարի կենտրոնում, զանազան անպերի վերայ, կանգնել է լուսազտակ Յիսուսը, որ հաղել է վարպի պէս քայ կործիր, ծաղկաւոր մի սիրուն տարազ եւ ձեռքերը լայնա-

տարած՝ առաւանձն է գէպի վեր, գէպի երկինք: Նրա համար սմէն բան տաճեղ է, անհունութեան մէջ: Արմանկարի վերեւում եւ ցածում իշխում են քարհողի տառեաւները, հինգ ցատում գէմքեր, որոնք իրենց արտայայտիչ զմեկով եւ քանապակեման գերքերով առանձին երանց են տալիս նկարին, որ ա՛յնքան զեղեցիկ է ու ներշնչիչ:

Եւստով ուշադրութեամբ դարձում է 2 մետր երկարութեան եւ 2 մետր ու 120 սանտիմ լայնութեան ունեցող մի մեծագիւր որմանեկար, որ ցատում գոյներով զրուստում է ջրխառնեական քանապակեման մի փայլուն էջը: Դա Վրաղիկապարհն է (պ. 4), նկարչական մի արտադրութիւն, ուր իշխում են մէկը միւսից զեղեցիկ ու վառ երանգները, որոնք շնայած երեք հարիւր տարւայ անցեալ ունեն, բայց ա՛յնքան կենդանի են ու հարադատ, որ ասեւ նոր են վրձնիւն եւ յատուկ զեղեցիկութիւն են տալիս պատկերին:

Նկարի իզգէն հաւատացեալ Գալիլեացիներէ յայթական ցոյցն է: Կենտրոնում լուսազտակ Յիսուսն է, որ կործեւ նայում է զտրերի միջից՝ իր առաւանալին բալար վեհութեամբ: Ունի կապոյտ եւ կարմիր երանգներով մի պարզ հագուստ: Նրա վեհ, զրաւի գէմքի վրայ թլիկեֆ կերպով պատկերանում է սիրայ, քարութեան, արդարութեան ու անմեղութեան փրկութալուսիւնը: Ամբողջ ջրխառնեակն է նա, անմեղուն, անխորատակիւր: Նստած իշու վրայ, գնում է երաւաղէմ, որ իշխում է որմանկարի աջ կողմը եւ իր լուսեման պատմում անցեալ փառքի մասին: Երկու տառեաւներ, որոնց արտայայտիչ գէմքերին առանձին զրուստութիւն են տալիս կանանք եւ կարմիր հագուստները, ճանապարհի վրայ, ա՛յնքան յաղց զմում զրաստի ոտքերի սակ, տարածում են իրենց հանդերձները, իսկ Յիսուսի սալեւից ու ետեւից գնում են վերմ հաւատացեալները, որոնք արմաւեհուն կանանք ճիւղերը ձեռքերին, ասեւ ուրախ հողով կանանք են: Ամբանումս, սքանչելի է նա, որ զալիս է Տիրոջ անունովս: Յիսուսի մօտից ջալլում են երկու փորձիկներ, 5-6 տարեկան երկու ձանկական սիրուն գէմքեր են զրոնք, լիքն աշտերով, աքանչելի ճակատներով եւ խառն ու խելոց աչքերով: Նայում են աջ անմեղ հայեացքով դրախչ երեխաներին եւ աղաւան, որ ա՛նտ նրանք կը բամբունեն մաղովոգից, ցած կ'իջնեն, կը վազեն մօտս, կը մղաւան, կը խառն եւ քաղցը կը կարկա-

չեն՝ անուշ քրոջ կենսատու աղբիւրի նման։ Իրանցիք մին յիշեցնում է ինձ վերածնունթեան մեծ վարպետ՝ անմահ Թափայէլի մի որմանկարը, որ դառնում է Հոսիւ Սէն-Լուկայի նկարաստանը։ Դա նոյնպէս 5-6 տարեկան մի փոքրիկ երեխայ է, մի մանկական սիրուն զէմբ, լինել տալերով եւ խօսուն ալքերով, որի սքանչելի մակառի վրայ եղերւած սիրուն խաղաղներն առանձին երանոյ են տալիս նրա նորր զինազէին։

Ճարտութեամբն։ Սակայն, որմանկարում ուշադրութիւնս դրուում են ո՛չ միայն արտայայտիչ զէմբերը, սիրուն իշուկն ու հմայիչ երանդները, այլեւ գեղեցիկ պանծորածն եւ զինամիկան։ Այդ բոլորի ներգաշակութիւնն ու կատարելութիւնը բանաստեղծական է, յատկապէս զգայուն, երազող եւ տրդաւորուող հոգիներին համար։

Նկարչական պոէզիայի գեղեցիկ ապագութեան ներքայ՝ առաջ եմ շարժւում եւ



Պատկ. 4 - Մոպկապաղդ. եր. 14

Գեղարեստական համոյճ պատճառում են ինձ նաեւ որմանկարի ժողովրդական մի ջանքի տիպերը, կենդանի, պարզ զէմբեր, որոնք նայում են իրենց խօսուն ալքերով։ Թաւ յոճերի ասիլ փայլող աչք ալքերում եւ խորհրդաւորութիւն կայ, եւ անսահման երջանկութիւն։ Նրանք, կարծես, ցանկանում են, որ Մեծ Մարդասէրը շուտով հասնի Երուսաղէմ եւ հիշեցնէ իր ասուածային պատգամները։ Վէլէ Աստուծ կայ. իսկ հոգի է, որին պարտինք երկրպագել հոգով ու սրբ-

հայեացք ուղղում «Սեղան վերնատան» մեծադիր որմանկարի վրայ (Պ. 5), վերջին հրամանի խորհրդաւոր ընթիւրը, որ դարձաւ քրիստոնէական ջերմեռանդութեան անկրկնաւորը։ Մի փոքրիկ դասով, հացերով, սիրուն գանակներով զարդարուն սեղանի առաջ երկու շարք նստել են տասներկու առաքեալները։ Նրանցից մի ջանքին իրենց խօսուն ալքերը սեւեռել են կենտրոնում բազմած Յիսուսին, որ կարծես բանում է իր սրտի վրայ ծածրացող պապները։ «Ճշմարիտ եմ

տառւմ, որ ձեռքանից մէկն ինձ պիտի մասնէ, որն ինձ հետ ուտում է»։ Այնտեղ է Յովհաննէս առաքեալը, որ զլուխը ջերմ սիրով փառէ և Յիսուսի կրծքին եւ կարծես խնդրում է պարզել. «Տէ՛ր, ո՞վ է»։ Ա՛յնքան խոշուն է Մարգասէրի հեղ ու պայծառ հայեացքը, որ թոււմ է, թէ ներդաժնութեան անկեղծ զգացումով պատասխանում է. «Յուդա Իսկարիօթոսցին»։ Առաքեալները զիմացների արտայայտել ու վսեմ ներդաշնակութիւնն ամբողջ մարմնի մասերի համաշփոթութեան հետ ա՛յնքան հարազատ է, որ դարձնում է որմանկարը զեղարեւոտական հանգրիւ մի աղբիւր։ Մեկէկ-մէկէկ նայում եմ այդ աղ-

մի երկուսն ինձ չիւնցնում են Իտալիայի Ջենովա քաղաքի «Սպիտակ Փալատ» (Palazzo Bianco) զեղարեւոտական միւզէում իմ տեսած երեք փարիսեցիները՝ զլուխները։ Դըրանք յայտնի նկարիչ՝ Վանդիկի ստեղծագործութիւններն են, որոնք, կարելի է ասել, արեւոտի զլուխ-դարձոցներ են եւ հիացմանք են շարժում։

